

# ՃԱՇԱԿ

ՊԱԿԱՊԵՆ ՊԹԹՐԱՎՐԵԱՅՆ

## ՊԱՏՄԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԼԵԶՈՒԻ (1)

Յօրինական զոր տողեցաք ի վերոյ ի Բուզանդայ մանաւանդ , որպէս և ի բովանդակ գիրսն նորա չիք ինչ խորթ և օտարութի ի լեզուէ անտի վիպասանացն և թարգմանչաց : Կալեալ զնա տիտ և օրինակ հնոյ ժողովրդական Հայ լեզուին , որպէս է իսկ առանց երկբայութեան ըստ մեզ , խտիր նորա ի մատենագրական լեզուէ անտի վիպասանաց և թարգմանչաց՝ է արդարեւ զգալի , այլ այս ի կարգին եւեթ է և յասացուածնս : «Ցայժմ ես քեզ առիւծ էի , այլ այժմ աղը ուէս . բայց մինչ ես Վասակն էի , ես սկայ էի . մի ոտնս ի միոյ լերին կայր , և միւս ոտնս իմ ի միոյ լերին կայր : » «Ես , եթէ գայ ինձ ի ձեռն երեք այր թագաւոր , ես ոչ սպանանեմ զայր թագաւոր որ գամ մի թագ ունի : » «Քարինք բազումք ի վերայ կայսերն և ձեր ի բերելդ . քարինք և մեր շատ կան ի թափել զատամունս նորա ի տալն , և ձեր ի բերելդ . զմեր վատթարութիւնս յո<sup>թ</sup> տարայց . այդմ երախտեաց ես դարձուցանեմ : » Ահա պարզ և անպաճոյմ կարգ որ զաւամիկ լեզուի զգոյն և զհուու հարկանէ : Միթէ քան զՄուշեղ այլ ազդ խօսիցի պարզն ուամիկ լեզուաւ զօրավար երկիւլած որում նուիրական իցէ անձն թագաւորի , և կամ քան զԱրշակ՝ այր թագաւոր զայրացեալ ընդ թշնամանս իւրոյ իշխանութեանն : «Զմեր վատթարութիւնս յո<sup>թ</sup> տարայց : » «Մուշեղ ուշ մահու սոյասկ : » «Եղին նմա դանակ զի հատցէ և կերիցէ : » «Իմ յայր թագաւոր ոչ ձգեալ ձեռն որ թագունի , և ոչ ձգեմ , և մ այլ իշել մնի : » «Մինչև զրան նորա

(1) Տես զթիւ ԺԱ:

տրարտ + , և խրատ նորա Եկաց առ մեզ : » Ահա ասացուածք բարեքիկ իմն և ամիսփի , որովք թուի թէ էր մեծատուն հին ժողովրդական լեզուն Հայոց : Այս լեզու տայ ապաքէն զգալ թէ ոչ այնչափ մատենագիր է որ գրէն ընդ խրատու արուեստին դպրութեան , որչափ ի ժողովրդենէ ոմն որ խօսի հանճարեղ ազատութեամբ ընտանի բարբառոյն , ոչ առանց բանիբուն ճարտարխոսութեան : Յիրաւի է ապա ասել թէ քան զլեզուն թարգմանչաց չէր պակաս սքանչելի և աննման այնր դարու ժողովրդեան լեզու , իրու արդարեւ երկու ուրեակք նոյնք և նմանք , անձամք միայն այլք , ծնեալք ի նմին արգանդէ որ է հանճար մերոց սքանչելի նախնեաց : Անհարթութիւնք ինչ և ազատութիւն ի կանոնաց դպրութեան , որպէս և ստէպն դառնալ և կրինել զնոյն և զմիրան և այլ եւս նոյնալիսիք որ պատահին առ Բուզանդայ՝ ոչ եթէ առ տգիտութեան ինչ թարգմանչին կամ յօրինչին են , այլ ի միամիտն պարզութենէ և յինքնօրէն համարձակութենէ ճոխութեան ժողովրդական լեզուին , որ էրն տակաւին կենդանի և իրագէտ անձին : Անտես արարեալ ոմանց զայս չքնազ սեպհականութիւն Բուզանդայ , իրու օրինակ այսովուայ ժողովրդական լեզուի , կալան զնմանէ դոյզն կարծիս , որպէս թէ մատենագիրն այնր անդիւտ գործոյ , ո ոք և էր , անուսումն ոմն էր և առանց դպրութեան : Այսպէս Փարավեցին թուի իմն խոտել զնուզանդ , մինչև չհամարել զայն գործ առն բնակելց յայնպիսում հռչակաւոր քաղաքի որպիսի Յիւզանդիոնն էր (համարեալ բիւզանդացի զՓաւստոս , որպէս թէ «բուզանդարանն» անուն որ կայ ի գլուխ մատենին՝ նշանակիցէ բիւզանդացի): Արդարեւ մեղադրութիւն Փարավեցւոյն թուի հայել ոչ այնչափ ի լեզուն որչափ ի սլատմագրութիւնն . այլ մատեանն Բուզանդայ , եւ ըստ լեզուին եւ ըստ պատմութեանն , տասնպատիկ առաւել է քան զգիրս Փարավեցւոյն , թէպէտ և սա եւս , ըստ Ժամանակակից պատմութեանն գոնեայ , չիցէ ամենեւին առանց մեծի պատանութեան : Արդարեւ լեզուն թարգմանչաց , որպէս ունիմք ի թարգմանութիւնս Գրոց և Եկեղեցւոյ հարց , Ասկերերանի , Կիւրդի , Տարադի , Եփրեմայ , այլովքն հանդերձ , որպէս և

Եղնկայն և Ադամթանգեղոսին և Կորեան , ոչ այլով իւիք ո-  
րոշի ի Բուզանդայն , եթէ ոչ առաւել իմն ճիշդ պահպանու-  
թեամբ կանոնաց արուեստին դպրութեան և համեստ չափով  
առաստութեան բանից . հիմն , եւ ի նոսս եւ ի սմա , է համակ  
նոյն : Բազում ինչ կայր մեղ արդարեւ ասել զայսմանէ , որ-  
ովէս և զառանձինն ինչ իրաց և զսեպհականութենէ միոյ միոյ  
ի գրոց ոսկեղէն դարուն , զբարերարն ազգեցութենէ նոցա  
համօրէն ի վերայ տոհմային լեզուին , և զայլոց եւո կարեւո-  
րաց , այլ զանց իմն առնել զայսու ամենայնիւ կարեւոր թուե-  
ցաւ մեղ , զի մի աւելի ինչ յերկարեցուք զպատմութիւնս որ  
արդէն իսկ քան զշափն յերկարեցաւ՝ հայեցեալ ի փոքր հասակ  
Հանդիսիս : Իսկ զյաջորդ ժամանակէն չորեքտասան դարուց ,  
զոր յիրաւի իցէ կոչել խոնարհագոյն կամ անկման դար հայե-  
րէն՝ դպրութեան , ասասցուք միայն համառօտիւ : Յետ իրը  
երեսուն կամ թէ աւելի քառասուն ամաց մահուանն Սահակայ  
և Մեսրոպայ , թերեւս և առ կենդանութեամբ իսկ ոմանց  
յաշակերտաց , գործակցաց նոցա , բանայր յանկարծ առաջի  
լեզուին զառիվայր իմն ընդ որ գնաց և գլորեցաւ լեզուն փո-  
փոխութենէ ի փոփոխութիւն , և եթէ երրեմն թուեցաւ  
իմն սթափել և դառնալ յետոս , որպէս եղեւն իսկ առ Վկա-  
յասիրիւ , եղեւ նմանութեամբ միայն ազնուագոյն ժամա-  
նակի լեզուին :

Աւելորդ է կալ և ցուցանել մանր զամբաւ խտիրն որ  
կայ ի մէջ լեզուին այսց երկուց ժամանակաց , իւրաքանչիւրն  
զատուցեալ իւրով առանձինն իւիք . իրք են այս և ոչ կար-  
ծիք . այլ թէ յորոնմ յերկուց աստի գտանիցի Հայերէնն ,  
խնդիր այս է , թէպէտ և ոչ առանց լուծանելց ըստ մեզ ,  
և դիւրին է տեսանել յազդեցութենէն զոր մին կամ միւսն  
գործեն ի վերայ լեզուին և մատենագրութեան առ հասարակ :  
Դժուարութիւնք հարթին , գործ է գտանել զգետինն : Այլ  
թողեալ զայս որ բանասիրական երեսք են խնդրոյն , եկես-  
ցուք , մեք որ անկեալ զլեզուն դիտեմք , ի պատմականն :  
Զի՞նչ արդեօք էին պատմառք այնպէս արագն և յանկարծ  
անկանելոյ Հայ լեզուին , մանաւանդ մատենագրութեան , զի  
չժուի թէ անկումն նորա եղեւ այնպէս արագ և յանկարծ

որպէս սորայն , և ոչ ի նմին պատճառէ : Առ համառօտութեան առ այժմ այսչափ ինչ միայն ասել շատ և բաւական լիցի , թէ գլխաւորն պատճառ անկման Հայ լեզուին և մատենագրութեան եղեւ այն որ և հռոմէականին անկման եղեւ պատճառք առ Մարկոսի Աւրեղիոսի (Ծընան. Մարկ. Աւրել էջ 46) : Յայն պատճառ յաւելան հուպ ընդ հուպ և այլք որ հանդերձ մատենագրութեամբն և լեզուին եւս ետուն վատթարել , որպէս խուժելն օտար ազգեցութեան ի մայր Երկիրն , վատրանդութիւն , տագնապք ազգի ազգիք որ ետուն մոռանալ զամենայն բաց ի կարեւորագունէն , ի պահպանութենէ կենաց :

Ա. Մ. Պ.

## Գ Ի Տ Ն Ա Կ Ա Ն

ԵՐԿՆԱԿՈՐ ԿԱՐՄՐՈՒԹԻՒՆՔ  
ԶՆՆԵԱԼԻ Ի ՎԵՐՋ ԿՈՅՍ ԱՄԻՆ 1883 (\*)

Համարեսցուք եթէ , յելս կոյս ամին վերջնոյ , վերկրագունդ մեր ողջյն շուրջ պատէր խառ իմն անօսոր յոյժ , որ կազմէր ի հաստատուն կամ ի ըսծ մասնկանց , և որոյ տռանձինն հանգամանք էին ի գոյն կարմիր փոխել զճաւագայթո Արեգական արձակեալս ի վերայ Երկրի : — Ցո՞ր վայր բարձրութեան տարածանէր խաւն այն ցոլացուցիչ , և զի՞նչ խտութիւն էր նորա : Ոչ սակաւք յերեւելի զննչաց արկեալ ի քնին վերեւոյթն երկնաւոր՝ բերէին ի մէջ չափս ինչ անկեանց , և զտարածս խաւոյն այնորիկ հաշուէին հասանել մինչև ի 40-50 հազարամէդր բարձրութիւն , որ արդարե դոյզն ինչ էր . զի մին ի չափուց անտի զորս ինձէն խսկ առնուլ մարթացաց ի գիտանոցի խմում ի Փոլմար՝ ցուցանէր բարձրութիւն ոչ նուազ քան 4150-200 հազարամէդր , որ անցանէ զանցանէ զհամատարած օդով . տարածք լուսեղէն խաւոյն որ զերկրաւ պատէր՝ սիռեալ շուրջ ձգէին ի վեր քան 40,000 հազար մէդր բարձրութիւն , ցոր վայր հազիւ

(\*) Տես զթիւ ԺԱ.

թէ հասանել կարիցեն յետին մասունք օդոյ . նա՛ վերին սիխուռք խաւոյն շողային ի բարձրութեան անդ (150-200 հա- զարամէդր) ուր չիք տեսանել նշմարանո ինչ օդոյ , այլ դա- տարկութիւն ամենեւին , միջոց համատարած թափուր ի նիւ- թոց կըուելեաց :

Արդ , քանզի ցայն վայր բարձրութեան հասանէին շողք կարմրութեանն և յամենայն կողմանց շուրջ զԵրկլաւ պա- տէին , չմարթի համարել զերեւոյթն զայն ի հրաբուխ լեռնէ ի- մեքէ , որպէս ի Քրաքաթօայէ . զի չէ մարթ փոշեաց հրաբուխ լերին , որչափ և սաստկագոյն բղիմունքն իցեն , զբնաւ կող- մամբ Երկրի պատել և ի չորից ծագաց նորին լինել երեւելի :

Այլ զիսճրդ հնար իցէ մեզ միսել ի մեկնութիւն չքնաղ երեւութիւն :

Նախ արկցուք ի քնին զկարծիս գիտնոցն որ համարէին անցանել զԵրկիր մեր ընդ ամալ մի փոշեղէն տիեզերական , որպէս ոյն թէ մասնկունք ամալոյն կարմրացուցանէին զարե- գակնային ճառագայթս՝ յետ աստեղն ի մուտս զօղելց և յա- ռաջ քան զծագել նորա : Այլ եթէ սակաւիկ ինչ միտ իրայն դնիցէ ոք , վաղվաղակի գոյ ի հաւառն՝ եթէ այնո՞ կարծեաց չմարթի լինել ասոյգ . քանզի եթէ էր ստոյգ զի յաւուրս անդ անցանէր Երկիր ընդ մեծատարած ամալ մի փոշեղէն , որպէս ասենն , որոյ բնութիւն իմն էր ի գոյն կարմրութեան երեւեցուցանել զճառագայթս Արեգական , ի բնութենէ իսկ իրացն տեսանել էր մեզ յայնժամ զլուսաւորութիւնն կար- միր ոչ միայն յետ ի մուտս լինելց աստեղն տուընթեան , այլ և զգիչերն ողջոյն բովանդակ . զոր օրինակ , զհասարակ գի- շերաւ երեւէր մեզ հորիզոն շուրջանակի կարմրացեալ , որպէս գօտի մի հրեղէն մինչև ցդագաթնակիտ անդր ամբարձեալ յերկինս և ըստ ամբառնալն նուազեալ տակաւ ի լուսոյն սաստկութենէ . այլ չեղև դէպ երկրաւորացս այսպիսի ինչ տեսանել երբեք : Ապա չմարթի իւկի լինել ի կարծիս այնոցիկ որ պատճառս երեւութիւն ամս մի դնէին փոշեղէն տիեզերա- կան , ընդ որ ասէին թէ անցանիցէ Երկիր ամիսս երկուս :

Այլ եթէ չիցեն կամք կալ ի բաց ի կարծեաց տիեզերա- կան ամալոյն , վասն որոյ պնդեալն են , պարտ է դէթ ի չա-

փու ունել զկարծիս փոշեղինին . մարթիցի թերեւս ասել զի հանդիպեցաւ Երկիր ամպոյ իմիք կարի փոքու զոր ի սուրայն իրում առ ընդ իւր զօրսաթեամբ ձգման : Այս կարծ գրեսցուք թէ չիցէ ամենեւին առանց հաւանութեան . այլև վասն այդորիի յիրաւի է մեզ ակն ունել պատասխանւոյ հարցուսոյս՝ եթէ զիա՞րդ մարթէր փոշեաց ամպոյն կախեալ կալ ընդ երկար , ոչ ի մէջ համատարած օդոյս , այլ ի միջոցի գատարկութեան . (զի , որպէս վերագոյնն ասէի , բարձրութիւն կարմրութեանն ի վեր էր յայժ տարածիւք քան զհամատարածն ըստ ճշգրիտ հաշուսոյ : )

Եկեսցուք այժմ ի քնին կարծեաց այնոցիկ որ գիրաքաթօյ , զիեառնն հրաբուխ ահագին , պատճառս դնեն զարմանալի երեւութին :


Բազումք յօդերեւութախօսից և ի փիւսկեանց , որպէս ասացի , ի կարծիս անդր միտէին , վթրաքաթօյ համարել պատճառ երկնաւոր կարմրութեանց ամին վերջնոյ , իրու այն թէ ճշմարիտ էր ասել . Զի չիք մեկնութիւն լաւագոյն և ճշգրիտ քան զոր ածաքն ի մէջ ի հրաբուխն Քրաքաթօյէ , պարտ է ապա զհետ կարծեացդ երթալ , թէ և իցէ ակամայ : Այս և այսպիսի բանք չեն Գիտութեան . չէ բաւական ասել «Քրաքաթօյ է» առ ի ցուցանել զգիտնական մեկնութիւն երեւութին : Արգել մեծ յառնէ զառաջինն ընդդէմ այդր կարծեաց , և չիք ինչ որ կարիցէ ի բայ բառնալ զնա : Զի բարձրութիւնն ահագին յորում երեւէին կարմրութիւնք յաւուրս լուսաւորութեանն՝ էր առաւել քան զ300 հազարամէդր , և ցայն վայր բարձրութեան չիք հնարթէ զօրիցեն հասանել տարերք փոշւոյ բզիւեալք ի կողից հրաշունչ լերին : Եւ այլազդ եւս . զիա՞րդ մարթիցի փոշեաց հրաբուխն Քրաքաթօյի սփոել տարածանել պատել յամենայն կողմանց շուրջ զԵրկրաւ , ընդ ծով համատարած և ընդ ցամաք մեծածիգ երեւել կարմրագոյն , ի բացարձակն արեւելից մինչև ի սորին խորս արեւմտից շողալ լուսաւոր , և ի վերին կիւսիսոյ մինչև ցհարաւ խոնարհագոյն փայլել չքեղն պայծառութեամբ : Քանի՛ անբարեւութիւն նիւթոյ հրաբին , քանի՛ սաստիկութիւն արագութեան բզիւմանց , եթէ և մար-

թէր իսկ , էին պիտոյ առ ի դարձուցանելց այսրէն ի գոյն կարմիր զճառագայթս Արեգական ի վերայ չորից ծագաց Նըրկիր : Զէ և չէ հնար , և ոչ ուստեք հնարաւոր համարեսցի Դիտութիւն , եթէ լեառն մի հրաբուխ բորբոքիցի երբեք այնպէս իմն մեծասաստ զօրութեամբ , մինչև լինել բաւական չուրջ զնըրկրաւ փոշիս յարուցանել , սփուել մոխիր ընդ բնաւ ամիսս քանի մի : Փոշեաց հրաբուխ լերին աշխարհ մի ողջոյն պատել թերեւս մարթասցի : այլ ոչ զնըրկիր բովանդակ , որպէս եհաս տեսանել մեղ յայնժամ :

Են և այլ պատճառք բազումք որ տան մեզ ի մոռացօնս դարձուցանել յիրաւի գերկոսին կարծիսն , զամպոյն փոշոյ և զէրաբխին Քրաքաթօայի , զորս ոչ իւիք լիցի հնար ունել ի համարի ստոյդ իրաց :

Զի՞նչ ապա մնայ մեղ ասել և զայլոց բազմապատիկ կարծեաց որ ելեւել զիմինեամբք առնէին առ ի մեկնել զտեսին մեծասքանչ : — Նատ լիցի ասել զի Դիտութիւն չեղեւ բաւական զայս նուագ հանել ի վեր զստոյդ սլատճառս երեւութին , և որ ինչ կարծեօք ասացան կամ ըստ հաշուոյ իմիք հաւանութեան՝ օգնել օգնեցին ի հորդել զշաւիդ ճշմարիտն մեկնութեան , այլ ոչ հասին յամրոկ գործոյն . կաց մնաց երեւոյթն առանց ծանօթս ինչ տալոց արանց Դիտութեան , որք ոչ կարացին կալ ի վերայ իրաց որ էրն նորասքանչ նորանշան , թէպէտ ոչ արտաքոյ օրինաց բնութեան , որ յանդնդախորս գաղտնեաց իւրոց թաքոյց զսկիզբն երկնաւոր երեւութին :

Յ. Գ.



### ՀԱ.ԻԱ.ՑԱ.Լ ՍՆՈՏԵԱ.Ց (1)

Է՞ր ինչ որում չհաւատային նախնիք այժմու խորագէտ Եւրոպացւոյն : Հաստարակաց իմն էր հաւատալ աշխարհականացն և եկեղեցականաց միանգամայն՝ թէ այսք բաժանեալ գունդս ի գունդս կաքաւէին կաքաւս ի գիշերի մինչդեռ լուսնակայ էր , թէ կախարդք վաճառէին զանձրեւ և զէողմ , թէ որ միանդամի ձեռն կախարդաց կուէր դաշինս ընդ Բելիարաց և

(1) Տես զթիւ ԺԱ.

կնքէր իւրով արեամբ՝ հասանէր ի պատիւ և ի մեծութիւն։ Զպապէն Սեղբեստրոսէ Երկրորդէ ասէին թէ շինեաց գլուխ մարդոյ ի պղնձէ, որ գուշակէր որ ինչ պատահելոց էր, և թէ եգիտ նա գանձ կախարդանօք ծածկեալ ընդ լերամբ ի գետնափորս մեծի իրիք պալատան։ Մեծագլուխն Շուկէրդ, եպիսկոպոս Լինքոլնի, արար, ասէին, միւս եւս գլուխ խօսուն։ իսկ զԱլբերդոսէ Մեծէ ասէին շինեալ ողջոյն իսկ մարդ ի պըղընձոյ, որ կայր նմա ի հարկի իրքե սպասաւոր, և այս ի ժամանակին մինչ Թովմաս Ագուինացի բնակէր ընդ նմա։ Այրն պղնձի չուայր, ասեն, շատախօսութեամբն հանդիստ բնակչաց տանն, մինչեւ չժուժալ որոց ի տանն էին, և Թովմայի զայրացեալ առնոյր մուրճ և հարեալ մանրէր զմարդակերպն լեզուանի։ Մեծանուն հայրն իսկ որ «սերովիշական վարդապետն» կոչէր յիւրոց ժամանակալցաց՝ չէր, ասեն, անփորձ ի ժածուկ գիտութենէ անտի։ Զանձրացեալ յաղմիէ անտի երիւարաց որ անցանէին առ նորա բնակութեամբ, շինեաց, ասեն, ծի մոգական ի պղնձոյ և թաղեաց ի փողոցի անդ առ դրանն, և յօրէ անտի յայնմանէ և ոչ մի դրաստ չիշխեաց անցանել ընդ այն։ Զէ պարտ մոռացօնս առնել զգլսոյն պղնձւոյ զոր շինեցին, որպէս ասեն, միանձունք երկու, Պագոն և Պունկի, և զորմէ ասեն թէ ցուցանէր հաւաստեաւ զժամն որ էր և որ էանց։ Թերեւս էր ազգ ինչ ժամացուցի ձուլածոյն։

Անուանի ալբիմիագէտն Պետրոս Տապանոյ ոգիս եօթն ասեն կալաւ արկ ի շիշ ապակեղէն, և եխից զբերան անօթոյն այնակէս արագ, մինչեւ չդտանել ոգւցոյն ժամ խոյս տալց յապակւոյն։ Արծաթն զոր ծախէր՝ յետ ժամու միոջ գայր միւսանդամ ի քսակ անդր նորա։ իննովկենտիոս Ը. պապ, ի կոնդակին զոր եհան յամին 1184, խօսի զկախարդաց օրինակ զայս։ «Եհաս, » ասէ, « յունկն մեր զի բազումք յարանց և ի կանանց չերկնչին ունել տուրեւառ ընդ այս դժոխականս, և կախարդութեամբք իւրեանց գործեն մլաս մարդկան և անասնոց։ Առնեն անզաւակ զամուսնացեալս, ածեն մահ ի վերայ նորածին մանկանց և ձագուց անասնոյ։ Յամաքեցուցանեն զցորեան յարտորայս, զխազով յայգեստանս, զպտուղ

ի ծառս և զիսոտ ի դաշտի : » Ապա գլուխն իսկ Եկեղեցւոյ հաղորդ էր յայնժամ դիւրահաւանութեան ռամկին : Տայր տանջել անխնայ զկանայս ամբաստանեալս կախարդութեամբ : Ի հովիտո Ոլպեան լերանց հարիւրք հարիւրոց ի պառաւանց մատնեցան յայրում՝ ամբաստանեալք թէ ուրացեալ զՔրիստոս անպատուեն զիսաչն , և թէ ընկեր լեալ այսոց չարաց հռչակեն զշաբաթ դիւխն : Այս հալածանք սկսան հրամանաւ քահանայալետաց և տեւեցին մինչեւ մօտ ի մեր ժամանակս ի մոլեգնութենէ տգիտաց : ՅԱՄԵՐԻԿԱ անդամ եղեն, ասէ Տրեքէր, այսպիսի հալածանք : Լութեր ասէ ուրեք եթէ զպատարագէն կագեցաւ ընդ դիւխն երես առ երես , անցուցեալ զբազում դիշերս անքուն և անհանգիստ : Ի միում նուագի մանաւանդ ասէ երեւեալ նմա դիւխն ի մթան դիշերոց , իբրեւ այն ինչ զարթուցեալ էր նորա ի քնոյ : « Դեւն , » ասէ , « դիտէ քաջ կարգել յարդարել զիւր հաւանութիւնսն , և բազում ճարտարութեամբ բերել ի մէջ : Զայն նորա է ծանր , այլ սուր . չխօսի պատ ի պատ , և ոչ խնդրէ ելք փախստի . է մանաւանդ զօրաւոր ի յանդիմանութիւնսն և ի պատասխանատուութեան : Ուստի չեն ինչ զարմանք եթէ որք միանգամ կրեն յարձակումն ի նմանէ՝ երբեմն գտանին մեռեալ ի մակիճս իւրեանց : Է յաջողակ ի վերայ հասանել յանկարծ և առնել հեղձամլճուկ : Բազում անդամ յարձակեցաւ այսպէս յիմ վերայ , և խեղդէր զիս այնպէս՝ մինչեւ թուել ինձ լինել մօտ յելանել ի մարմնոյս : Թուի ինձ թէ կեսնէր և Եղոլամբատիստ մեռան զայս օրինակ : Օրինակ մտանելց դիւխն ի պայքար չէ ինչ անհաճոյ . ետ ընդ ետ սկիզբն առնու խօսել այնպէս ճոխաբար և պնդով , մինչեւ արագ արագ ի նեղ արկանել զիւր խօսակիցն : » Այսպէս մարդիկ յամենայն կարգէ և յամենայն աստիճանէ էին նշաւակ այսմ ամօթալի պատրանաց : Իրբեւ ազդ եղեւ Յակոբայ Ա. ոյ , արքայի անդզիացւոց , թէ կին ոմն Ագնէս Սատիսոն անուն , անուանեալ կախարդ , և այլ ևս կախարդ կանայք Ակովտիացիք , թուով իբրեւ երկերիւր ընդ նմա , մոեալ ի նքուղ նաւարկելոց էին ի Նէյթ երթալ յեկեղեցին նորթ Պէրուիք քաղաքի , ուր դեւն առնէր նոյցա կոչունս , ետ ունել զնա և հարցանել տանջա-


նոք : իբրեւ կարի յերկարէին կտտանքն , թագաւորն ինքնին  
անձամբ յառաջ մատուցեալ զհարցափորձն՝ իբր այն թէ ի  
վերայ հասանէր , եթէ երկերիւր կախարդք , որոց գլուխ էր  
Ագնէս , միրտեալ և ընկեցեալ ի ջուր կուզ մի սեաւ՝ յարուցին  
մրրիկ ահեղ , մինչեւ արքունի նաւուն սքանչելոք պրծել ի  
նաւաբեկութենէն : Յետ այսր բռնի խոստովանութեան՝ Ագ-  
նէս դատապարտեցաւ յայրումն , և մեռաւ կինն հէք բողոք  
կալեալ թէ էր անմեղ , և մատուցեալ աղերս առ Փրկիչն ո-  
ղորմել նմա , մինչ քրիստոնեայք զլանային նմա զիւրեանց  
գութ : Ի հասանել Յակոբայ ի թագաւորութիւնն , հաւանու-  
թեամբ մեծի ժողովոյն որ Պարլամէնտն կոչի՝ հանեալ էր հրո-  
վարատակ դատապարտել ի մահ զամենայն անձն որ ամբաստա-  
նիցի իբրեւ կախարդ կամ վհուկ և ի հաղորդութեան ընդ-  
դիւին : Ի ժումանակին յայնմիկ Անգղիա էր մոօք յետնեալ  
յոյժ : Հրովարտակն զոր յիշեցաք՝ ջնջեցաւ աստ ուրեմն յա-  
մին 1736 : Գաղլացոց յառաջ քան զԱնգղիացին էր անհետ  
արարեալ յիւրեանց օրինաց զայնպիսի անագորունութիւնն :  
Յամին 1672 Լուտովիկոս ԺՊ. հաւանութեամբ իւրոց խոր-  
հրդականաց արդել հալած էլ զամբաստանեալսն իբրեւ կախարդ :

Որոց միանգամ ընթեռնուն զայսոսիկ՝ չիցէ դժուարին  
տեսանել թէ քանի յոզդողդ և յեղյեղուկ են բազում ան-  
դամ զոր անշարժն և անփոփոխ համարին մարդիկ : Յընթացս  
այնչափ դարուց չէ մարթ ցուցանել ինչ որում այնպէս սեր-  
տիւ հաւատացեալ իցէ դրեթէ համօրէն մարդկան լստ վաւե-  
րական վկայութեան պատմութեան , որպէս այն զօրմէ բանքս  
են : Բայց և այնպէս յիննեւատաներորդ դարու աստ եկաք հա-  
սաք յայնպիսի հաւաստիս որ չտան մեզ ամենեւին երկխցել  
թէ այն ամենայն զորս այնպէս պինդ ունէին մարդիկ մինչեւ  
ի հաստատութիւն նոցա ածել անթիւ մարդիկ զբոցով , ոչ այլ  
ինչ էին եթէ ոչ յետին անմատութիւն և պատրանք : «Այս ամե-  
նայն ցնորք , » ասէ Տրեբեր , «որ կալեալ ունէին զմիաս հարց  
մերոց , և յորոց չէին զերծ արք աւագք և գիտունք անգամ :  
բարէ , եղեն յոչին : Զիք այլ եւս կաքաւել դիւաց իլոյս լուս-  
նի , ոչ եւս գոն մեռելահայք որ հանիցեն զուրուականս մեռե-  
աց ի գերեզմանոց , կամ որ վաճառիցեն զոգիս նոցա դիւին :

և զմուրհակակն կնքիցեն արեամբ նոցա , և ոչ խուճապք որ գայցեն պատուհասել զկախարդն որ խոռվեցոյց զնոսա : Արուեստ գուշակաց , ագարակահմայութիւն , հրահմայութիւն , ջրահմայութիւն , ձեռնահմայութիւն , իղձք , երազահանք , պատգամք , դիւթութիւն , քաւդէութիւն , բնաւն եղեւ անհետ : Ոչ գոն գորգոնայք , ոչ կիշրայք , ոչ վարդապայն քաղք , ոչ շահասիեաք , ոչ ծիւադք առնակերպք և իգակերպք գիշերականք յանարժան խառնս : Կանայք Հոլանտացւոց ոչ եւս ծնանին ճիւազս վասն ի թոնիրսն նստելց նոցա : Նաւավարք ոչ եւս երթան գնել հողմս յաջողակս ի կախարդաց լապոնաց : Եկեղեցիք մեր ոչ եւս հնչեն յաղօթից մատուցելոց ի խափանել զազդեցութիւնս գիսաւորաց որ վեսասկարն կարծէին : Պահէլ պահէին ի մաշտոցս մեր հնագոյն պատճէնք աղօթից ի խնդրել յԱստածոյ պարզութիւն օդոյ կամ զանձրեւ , թէպէտ այն աղօթք են արդարեւ գեղեցիկ և լի հաւատով : Դեղարարն ոչ եւս կարդայ աղօթս ի վերայ անկանին իւրոց , ուր ծեծէ զնիւթս գեղոյն յուսացեալ առնել զնս հազորդ աստուածեկեն իմն զօրութեան : Ո՞չչափ սակաւք են այժմ որ քան առ բժշկսն երթալ՝ ընտրիցեն մանաւանդ կապել ընդ անձն յուռութս ինչ և բժժանս , կամ ոսկերս իմն մեռելոց և անասնոց և ակն ունել ի նոցանէ բժշկութեան : Այս ամենայն փարատեցան հանդերձ դիւրահաւաւանութեամբն որոյ էին ծնունդք , տեւեցին սակայն դարս հնդետասան յնւրոպա միայն : «Այս սլատմութիւնք , » յաւելու Տրեբէր , «տան զամօթի հարկանել արանց լուսաւորելոց մերոյ ժամանակիս . են սակայն նոցա ի խրատ և ի կրթութիւն : Ուսուցանեն մեզ եթէ այլանդակութիւնք ի կարծիս մարդկան առ ժամանակ մի են , և իբրև արդարեւ մանկութեան ցնորք տան տեղի ի հասանել մարդկան յայրութեան տիս : Մարդ որ տակաւին տղայն է՝ լուս ցնորիւք զամայութիւն և զիսաւար . և ի ժամանելն յարբունս , իբրև հասանէ ի վերայ եթէ ծնունդ են այնք մոտաց խակրութեան , ոչ այնչափ իւրով գիտութեամբն և փորձիւ ուստանի զայս , որչափ յանզգայս իմն և տակաւ ի բաց թօթափելով ի հարկէ լուսութեան իրաց վոտոցութեանն , որպէս եղեւն յԱւրոպա : Սակայն , ոյս լիութիւն

տիոց վաղագոյն եւս հասանէ, եթէ գտցին թելադիրք որ  
առնիցեն խելամուտ ճշմարտութեան պատկառեցուցանելով  
և ծաղր իմ առնելով զանոտի երկիւղիւն։ Այսպէս անկան  
փշրեցան հաւատք սնոտեաց յԵւրոպա, իբրև զպատկերն նա-  
բուգողոնոսորայ յերկաթոյ և ի խեցւոյ, ի վիմէ անտի Գիտու-  
թեան առանց ձեռին։ Այնչափ ցնորք խօլականք եղեն իսկ  
և իսկ անհետ, յորդամ երգ հաւուն Ասկղեպեայ ետ զաւե-  
տիս ծագելոյ մտաւոր այգուն Եւրոպայ։»

Ա. Մ. Դ.



## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՏԱԿՈՏՈՐՔ Ի ՆԱԽՆԵԱՑ

ՅԱՅՑԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԿԱՐԴՉԻՆ

ԵՐԿՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԵԱՆ ՄԱԿՐԱՅԵՑԻՈՑ

Որ ինչ միանգամ ի ձեռն Յասոնեայ Կիւրենացւոյ ի հինգ  
գլուխս գալրութեան ցուցեալ է, վասն Յուղայ Մակարեանց  
և եղբարց նորին, և տաճարին սրբութեան և սեղանոյն նա-  
ւակատեաց, վասն ճակատամարտին ընդ Երեւեալն (Եպիփան)  
Անտիոքայ և Քաջահայր (Եւպատոր) որդուոյ նորա, կամ վասն  
որ ինչ յերկնից յայտնութիւնք եղեն, վասն քաջութեան  
պնդութեան օրինացն, վասն սակաւուք զբաղումս որ զաշ-  
խարհս յաջս դնէին, զխուժագուժ ազգս, հալածելոյ,  
կամ զհոյակապ ընդ ամենայն տիեզերս զշքեղ տաճարն վե-  
րստին շինելոյ, կամ զմեծ քաղաքն (զնրուսաղէմ) ամենայնիւ  
յամենայնի յազատութիւն հանելոյ, և վասն ամենայն քաղց-  
րութեամբ հեղութեամբ խաղաղութեամբ Տեառն Առոտւծոյ  
ընդ մեղ հաճ լինելոյ, զայս ամենայն ջանացուք ի մի գլուխ  
հրովարտակիս կարճ ի կարճոյ ցուցանել։ Զի հայեցեալ մեր  
ի խուռան համարոյ բանիցն, և ի ծանրութիւնն որ թուիցի ո-  
րոց կամիցին մխել ի բանս մատենիցն և ի նոյն թաւալել վասն

թանձրութեան հիւթոյն խորութեան , հոգացաք առնել ընթերցանելեացն զբոսանս (դիւրութիւն) , յիշատակ առանց աշխատութեան : Եւ մեզ որ զաշխատութիւնս զայս յանձն առաք վասն համառօտ բանիս՝ մի դիւրին ինչ ջան համարիցիք կամ սակաւ քրտանց և տքնութեան արժանի : Որպէս ոք զի պատրաստիցի առնել ուրախութիւն կոչնոց ընկերաց , մեծահաց գործիցէ զընկերացն ուրախութիւն , և ոչ զիւր դիւրութիւն խորհիցի , սոյնպէս և մեք վասն բազմացն հաճութեան ջան յանձն առաք : Զճշդելն և զճշմարտելն՝ զայն առաջնոյն թողաք . զեղչելն և զբազկելն և զբանն կարճառօտ ի համառօտ կացուցանել , զայն մեք ոչ դանդաղեցաք : Որպէս յորժամ վասն հասարակաց շինութեան ասլարանից բազումք զգործն բաժանեցեն , սկիզբն և կատարած շինուածոյն ի բուն ճարտարապետ անդր հայի . այլ ծեփելն և գունելն և արծնելն և նկարելն , այն ի զարդարիչ անդր հայի : Սոյնպէս և մերս . հարցանելն և փորձելն և քննելն և զհետ վարել ճըշմարտութեան բանիցն , և զխորին խորհուրդս խորագիտութեամբ ի վեր բերել , որ առջնորդն եղեւ այնոց դպրութեանց՝ ի նմանէ իննդրելի է . այլ համառօտ կարճառօտ զբանն հատանել , որպէս այժմիկ պատմելոյ յանձն առեալս եմ , յինէն պահանջելի է : Արդ , այսչափ ինչ զօդեալ իբրեւ առաջին բան , սկիզբն արացուք պատմել զոր խօստացաքն . քանզի արդարեւ անագորսյն (անհանձար) մոտաց է զճառս (զյառաջաբան) մատենին յառաջագոյն երկայնել , և զմատեանն դլսովին համառօտ կարճառօտ պատմել :

### ՄՈՒՏՆ ՀԵՂԻՈՂՈՐԾԻ Ի ՏԱՃԱՐԻ ԱՌՆՈՒԼ ԶԳԱՆՉԱՆ

Իբրեւ եկն եհաս (Հեղիողորոս) յնրուսաղէմ , սիրով քահանայապետն և քաղաքն ամենայն ընկալան զնա : Սկսաւ նա հարցանել թէ արդարեւ այնչափ գանձք իցե՞ն (ի տաճարին) որպէս ասացինն : Եկաց յառաջ քահանայապետն և ասէ . «Ե՞ն են արդարեւ աւանդք այրեաց և որբոց ի պահ եղեալ , այլ ոչ եթէ այնչափ որչափ ամբաստանող նամակագիրն խօսեցաւ : Ընդ ամենայն թէ քաջ՝ իցեն քանքարք արծաթոյ չորեքհարիւր , և քանքարք սոկոյ՝ երկերիւր . այլ զրկել զհաւատաց-

եալս չիք հնար՝ վասն մեծապատիւ չքեղ ընդ ամենայն աշ-  
խարհ ամուռ անխաք տաճարին : » Նա իբրեւ լուաւ զբանն քա-  
հանայապետին , զարքունի գհրամանն ի մէջ առնոյր . « Ի սպաս  
և ի պէտ արքունի երթալ հրաման է , ասէ , գանձիու այդ-  
միկ : » Եւ անդ լինէր ոչ սակաւ . ջան և վտանգ խռովութեան  
ի քաղաքին : Քահանայքն թաւալիալ անկանէին առաջի սե-  
զանոյն նովին սրբութեան պատմուճանաւն , աղաշէին զայն  
որ վասն աւանդապահ զգուշութեան զօրէնս հաստատեաց ,  
զի զայս ողջ անարատ յիւրաքանչիւր աւանդատուս հասու-  
ցանել մարթասացէն : Անդ էր տեսանել զուեսիլ քահանայա-  
պետին և զհալել ի միտս իւր . զի տեսիլն և գոյն երեսացն  
ցուցանէր զսրախն թախծութիւն , զի իջեալ մածեալ պատեալ  
պաշարէր զնա ահ և երկիւլ և սոսկումն մարմնոյ : Դարձեալ  
յիւրաքանչիւր ապարանիցն դասադաս մտանէին ի համաշխար-  
հի խնդրուածս , զի յարհամարանս պատիւ մեծի տաճարին  
գնացէ , և կանայք քրծազգածք ընդ հրապարակս աշխարէին .  
արգելականք կուսանաց ի կուսաստանաց անոփի ի դրունս և  
ի պարիսպս ընթանային , և կէսք ընդ պատուհանս արտաքս  
կարկաւէին , և ամենեքեան առհասարակ աղօթից բարբառով  
զձեռս համբարձեալ յերկինս մտուունս տատանէին : Եւ անդ  
էր ողորմ տեսիլ տեսանել , զի առհասարակ անկեալ մարդկանն  
զազօթս թաւալելով յերկինս մատուցանէին , առ ամենակալն  
կարդային զաւանդս հաւատացելոցն ի հաւատացեալն ողջ  
անարատ հասուցանել :

Ս. Ա. Հեղիոդորոս զյայտնութեան վճիռն գտանէր : Մինչ-  
դեռ նա սպասաւորաւն հանդերձ ընդ գանձի տունն չքէր ,  
որ ի վերայ ոգւոց և ամենայն իշխանութեանց զօրութիւն ի  
ձեռս իւր ունի՛ երեւոյթ մի նշանի մեծ արար . զի ամենե-  
քեան որ իշխեցին մտանել ընդ նմա՝ լուծան լքան ընդարմա-  
ցան , ի պարտութիւնս վասոթարութեան մատնեցան յԱստու-  
ծոյ զօրութենէ անտի : Զի երեւեցաւ նոցա յանկարծակի ե-  
րիվար մի մեծացուք հեծելով հանդերձ , երեւելի զարդու ի  
զէն սոկի վառելով , և այլ երկու արք երիտասարդոք հզօրեզք  
ի զարդ գեղեցիկ զարդարեալք առաջի հեծելոյն . որք մատ-  
եան վաղվաղակի յաջմէ և յահեկէ , և ի մեծամեծ հարուածս


հարկանէին զՀեղիոդորոս , մինչեւ անկեալ յանդայ թմբրեալ  
մերձ ի մահ բառնային զնա . որ այնչափ շքով և պատուով և  
սաստիւ և սպասաւորօք մտեալ ձեմէր ի տան գանձին , արդ-  
բարձեալ բերէին յանդայ , զչափ առեալ զի յայտնասլէս ի  
զօրութենէն Աստուծոյ ի վերայ հասելց՝ անմռունչ անբարբառ ,  
պակասեալ յամենայն յուսոյ փրկութեան , ընկեցեալ յերկիր  
կիսամահ դնէր : Յայնժամ փութապէս ոմանք յեկելոց անտի  
բարեկիրք , աւագ ընկերք զօրավարին , յուսո հասանէին Ոն-  
եայ՝ խնդրել ի բարձրելցն գոնէ զըունչն չնորհել նմա : Խոր-  
հուրդ կալաւ քահանայապետն , գուցէ կարծիս ինչ տացէ  
թագաւորին իբրեւ դաւով ինչ ի նմանէ կամ ի Հրէից անտի  
զայրն վկասեալ . ի խնդրուածս լինէր , պատարագս մատու-  
ցանէր վասն առնն փրկութեան : Այն ինչ քաւութիւնքն ի  
ձեռս քահանայապետին մատչէին , վաղվաղակի նոյն երիտա-  
սարդք զային իջանէին առաջի Հեղիոդորայ նովին հանդերձիւ  
զարդարեալ , և ասէին . «Բազում չնորհս դու . Ոնեայ քահա-  
նայապետի կալջիր . վասն նորա քեզ Տէր ի ձեռն նորա զո-  
գիսդ չնորհեաց . այլ դու այդչափ տանջանօք պատուհասեալ՝  
պատմեսջիր զայդչափ մեծութիւն զօրութեանցն Աստուծոյ  
առ ամենեսեան» : Եւ զայս իբրեւ տացին , անդէն վերացան :

Հեղիոդորոս իբրեւ անձին զգաց , յոտն կացեալ վաղվա-  
ղակի , ողջակէզս պատարագաց մատուցանէր Տեառն որ չնոր-  
եաց նմա զոգիսն , և անդէն ի նոյն չափ յառաջինն զօրացոյց :  
Եւ զքահանայապետն զՄիա մեծապատիւ մեծապարծեւ մե-  
ծարէր , և ինքն չու արար խաղաց գնաց անդրէն առ թագա-  
ւորն , և ընդ ամենայն տեղիս լնոյր վկայութեամիր զաքանչե-  
լիան Աստուծոյ զոր ինքն իսկ իւրովք աչօք տեսեալ էր : Թա-  
գաւորն իբրեւ սկսաւ հարցանել զՀեղիոդորոս՝ թէ «Ո՞րպէս ,  
զի՞արդ , յոր գործ երթեալն էիր՝ զի՞նչ վճարեցեր , » նա  
սկսաւ տալ զրոյցս քանքատելով և ասէ . «Ո՞՛ , յԵրուսաղէմ  
երթեալ երթիցէ որ ոք ձեր թշնամի և իրաց մեծաց ձերոց  
միասակար իցէ , զնա հրամայեսջիք յղել , և գտջիք զնա անտի  
այսր գանալից չարագան , թէ ապրել միայն կարասց . զի  
այնպէս ձշմարիտ մեծ զօրութիւն նստի անդ , և որ միանգամ  
թշնամութեամբ կամ թէ արհամարհանօք յայն տեղի հասա-

նէ , մեծամեծ հարուածովք հարկանի , թէ արձակեցի եւեթ : » Վասն Հեղիոդորայ և գանձի տանն պաշարելոյ այս-չափ բանք եղեն :


\* \* \*

Եղիազարոս , այր մեծ ընդ առաջինսն ի գնդի անդ , լցեալ աւուրբք , ծերացեալ հասակաւ , գեղեցիկ երեսօք , ածեալ գայլ ի բերան ստիպէին ուտել խոզենի : Նորա ի մոտի եղեալ՝ յամառեալ պնդեալ սրտիւ՝ յանձն առ ընդունել զմահ քաջ անուամբ քան զկեանս խղճիւ և ընկերաց ստգտանելով . Ընտրեաց ինքնակամ հասանել ի տանջանս . ձեռներէց լինէր թքանել անարդել զպաշտոնս նոցա , որպէս օրէն է համրե-րողաց բացէ ի բաց անարդել ինչ զոր ոչ է օրէն յանձինս մա-տուցանել : Յանձն առ ասեն (ցնա) զիրաման թագաւորիդ , և քեզ այլ միս մատուցուք , զի լուծցես զկարծիսն և ի մահ-ուանէդ ապրեսցիս : Ո՛չ արժան ոչ պատշաճ , ասէ (Եղիազա-րոս) , մերոյ չափոյ հասակի՝ կեզծաւորութիւն . իցեն բա-զումք ի մանկտոյ այտի որ ընդ ակամբ հայիցին , կարծիս ի մոտի զնիցեն և ասիցեն՝ եթէ Եղիազարոս , իննանամեան , հասեալ ի գուռան վախճանի , յայլազգութիւն դարձաւ . և զայս խիզճ մտաց և կեզտ անուն ծերութեանս յաշխարհի թողից : (Պալր. Տ. Մակար.)



## Ս Ե Ս Փ Ա

Լուռ լիր , ո' քնար . եւ գուր , աղէ , լուռ լերուր ,  
Ո'վ մարզարէք , հանդերձելոց ճայնատուք .  
Հանդէպ նորա որ զալոցն է արդ կանխին  
Ի լըռութեան կալ տիեզերք համօրէն ,  
Կափուցարուք , օն , ո' շըրթունք հոգեկիրք .  
Արդ զարարեալ հանգիջիք դուք , սուրք տաւիդք ,  
Մինչեւ հասցէ օրն այն յորում լու լիցի ,  
Անդ ի բարձունս , ի մէջ ամպոց , նորանշան  
Բարբառ զոր ոչ լըւաւ երբեք ազգ մարդկան .  
«Խաղաղութիւն ուերկիր եւ փառք ի յերկնի » :



ԳԱՅԼ ԵՒ ՇՈՒՆ

Գայլ մի էր ոսկըր լոկ եւ մորթ .  
Այնպէս խնամով հըսկէր շանին :  
Գայլս այս վրտիտ զըտանէ այլ շուն  
մի հըզօր եւ զեղեցիկ ,  
թաւ եւ մըսեղ , որ մողորեալ էր ըստ  
դիպաց :  
Մարտ ընդ նըմա տալ եւ առնել ըզ-  
նա խր որս  
շանկալ ցանկայր սեպուհըն գայլ .  
Այլ վտանգ մեծ կայր առաջի ,  
Զի էր վիրազըն կաշըմբուն , յաղ-  
թամարմին ,  
Ի պաշտպանել զանձն ծեռնհաս :  
Ուստի եւ զայլըն մատուցեալ մեղ-  
մեխանօր ,  
Եւ բանս արկեալ ցուցանէ զանձն  
խընդակից  
ընդ գիրութիւնն ափիքերան իմն եւ  
ապշեալ .  
«Ի թեզ է , ո՞վ քաջ , ապաստան  
Լինել քան զիս գէր» , ասէ շունն .  
«Թողուլ զանտառս պարտ է թեզ ,  
Ուր ընկերոք կեսս թըշուառ ,  
Գըծուծ , խարուեալ , երիթացեալ ,  
Չարալըտկ եւ սովամահ .  
Զիք ծեր ռոհիկ եւ ոչ հասոյթ ինչ  
բընաւին .  
Ի սայր սըրոյ հայթայթել կայ ծեզ  
զամենայն :  
Եկ դու զիմ կնի , եւ ունիցիս դու  
բախտ բարտոք :»  
«Աղէ՛ , զի՞նչ պարտ իցէ առնել ինձ ,»  
ասէ զայլն :  
«Ոչինչ ,» ասէ շունն , « այլ պնդել ըզ  
հետ արանց

Որ ցուակ ի ծեռն շըրջին ի մոյր ,  
Եւ մերթ ընդ անճն անկանել տեառն  
եւ տալ ըջծինս .  
Այսպէս տացեն թեզ ի ոռմիկ  
Պէսպէս խորտկաց ըգհամաղամս .  
Զհաւու երրուծ , զաղաւոյ թեւ .  
Խսկ ըզզըզուանս թողում ասել :»  
Գայլն համարի զանձն հասեալ յե-  
րանութիւն ,  
Մինչեւ յարտօսըր յուծանել առ խըն-  
դութեան ,  
Զնանապարհայն տեսանէ նա  
Ըզպարանոց շանըն ցետեալ ,  
Եւ ասէ . «Զի՞նչ այդ , բարեկամ :»  
— թեզ զի՞ փոյթ է : » — «Աղէ՛ , ա-  
սս : » — «Զի՞ հարցանես : »  
— «Եւ ընդէ՞ր ոչ : » — «Թերեւս ա-  
նուրն որով կապիմ .  
Եպատճառ այնր զոր տեսանես :»  
«Կապի՛ն ,» ասէ զայլն , « ապս չես  
կարող երթալ յուպէտ յուկամ ըստ  
քում հիշտի : »  
— «Այո , ոչ միշտ . այլ զի՞նչ վընաս  
անտի , աղէ՛ : »  
— «Եւ կարի իսկ քաջ ,» ասէ զայլըն ,  
«բարեկամ ,  
Համաղամաց բոց չեն ինձ պէտք .  
Ես զանձս անզամ չառնոյի յանձն  
յայս պայման :»  
Զայս ասսացեալ սեպուհըն զայլ՝  
Փախեաւ անտի սրտիքերան , եւ  
փախչի ցարդ :

ԼԱՖՈՆԹԻՆ

Ա. Մ. Գ.

ԱՌԱՆՁԻՆՆ ԲԱՆՔ  
ՀԱՅԵՐԵՆ ՀԵՋՈՒԻԻ  
Ա

ՅԱՐԵՒԻ ԱՆԿԱՆԵԼ . ԴԵՆԵԼ : \*Պղատոն վաճառակուր եւս  
եղեւ . . . և ողորմելի և եղեցի յարեւէն եւս անկանէր :

ԶԱՐԵՒ ՀԱՏԱՆԵԼ . տե՛ս զՅԱՐԵՒԻ ԱՐԿԱՆԵԼ : \*Եթէ ոչ  
վասն դայեկատոհմ միասնունդ սիրոյն էր , զքաղցր արեւդ  
յաշացդ հատանէի :

ԱՐԵՒ ՏԱԼ . արեւ ծագէլ : \*Զի ընդ երկիր նոյն օդ խառն  
է , յորժամ անձեւ լեալ իցէ և արեւ տայցէ . . . յայտ յան-  
դիման երեւի :

ՅԱՐԵՒՈՒ . լուսով . երեկո վշան : Ասէ Հռագուէլ (ցորդիս  
իւր) . Զի՞ է զի յարեւու եկիք այսօր :

ԱՐԹՈՒՆ ԿԱԼ . ԼԻՆԵԼ . աբնուն կենալ . հանէլ . ունէլ : \*Ոչ  
կարացէք մի ժամ արթուն կալ ընդ իս : — \*Արթուն կացէք  
այսուհետեւ : — \*Եթէ՝ արթուն իցեմք և եթէ ննջիցեմք ,  
նովաւ հանդերձ կեցցուք :

ԳՈՒՆ ԸՆԴ ԱՐԹՈՒՆՍ ԼԻՆԵԼ . կէս ուսն կէս արնուն ըլլաւ :  
\*Իբրեւ քուն ընդ արթունս եղեւ :

ԱՐԺԱՆ Է . պարշաճ է . իւ վայլ : \*Որ երդնու յոսկին կամ  
ի պատարագն՝ արժան է : — \*Ոչ է արժան գործել ի շարա-  
թու : — \*Տայ ի կողմանց ուստի արժան իցէ :

Կամ՝ կարծէ : \*Տայէ ինձ զայրն կրկին . . . արծաթոյ՝ որ-  
շափ արժան իցէ : — \*Գնեցից արծաթոյ որդան արժան իցէ :

ՀԱՏ ԱՐԺԱՆԻ . արժանապէս . ինչպէս որ իւ վայլ : \*Զկոչեց-  
եալ բարեկամն ընկապցի ըստ արժանի : — \*Ոչ ըստ արժանի  
խորհին վասն նորա :

ԱՐԺԱՆԵԼ ԱՐԺԱՆՍ . գինը՝ արժեւը բնել դրոժ վրայ . ինչ՝  
դրոշ արդել : \*Զնջեան զգիրն , մանաւանդ զարժանսն զոր ար-  
ժանեաց յոգիսդ սատանայ :

ՅԱՐԺԱՆԻ . իշտառք : \*Որ այնչափ բարերարութեամբ  
չեղեւ սիտանի՝ յարժանի զանհնարին վրէժս տայցէ : — \*Բար-  
ժոք և յարժանի ցասեաւ ընդ նմա մարգարէն :

ԱՐԺԱՆԻ ԱՌՆԵԼ . արժանէ ընել մեղել : \*Որոց սպառնայր  
ո՛չ պատրանաց և ոչ թաղելոց արժանի առնել :

ԱՐԺԱՆԻ ԼԻՆԵԼ . արժանէ ըլլալ մեղուիլ . արժանանալ : \*Վասն  
անուանն արժանի եղեն անարդելոց : — \*Արժանի լինել ձեզ  
արքայութեանն Աստուծոյ : — \*Զի արժանի լինիջիք զերծա-  
նել յայնմ ամենայնէ որ լինելոց է :

ԱՐԵՒՆ ԹԱՓԵԼ . արիւն առնել : \*Գործ բժշկի այս է , խա-  
րել , կտրել և արիւն թափել :

ԸՆԴ ԱՐԵՒՆ ԳԱԼ . արիւն նագել . մանել : \*Ջամանակ է  
այս նահատակելոց . . . ընդ արիւն գալոյ :

ՅԱՐԵԱՆ ԱՌՆԵԼ . արիւնութել : \*Զիփուշն ուստի և ունիցի  
ոք , յարեան առնեն զձեռս ունելեացն :

ԱՐԿԱՆԵԼ ԶՈՄԱՄԲ . չըսն առլ . հադցընել : \*Արկցես զհան-  
դերձ քո զեւ : — \*Առեր զհանդերձն գեղեցիկ , և արկեր զնո-  
քօք : — \*Արկցեն որպէս կրկնոց զամօթ իւրեանց զիւրեամբք :

Կամ՝ (Ցիւն) չըսն յիւլ . հուր ուել . վերտբել : \*Տկարու-  
թիւն արկանէ դիսուծով : — Որ ինչ սատանայի ճահ է , զայն  
զԱստուծով կամին արկանել :

ԱՐՏԱԿԱՆՍ ԴՆԵԼ . չպէլ . արշուել : \*Ապրեալ ի ծփա-  
նաց՝ արշաւանս դնեն յիւրաքանչիւր գաւառս :

ԱՐՏԱՍՈՒՏ ԻԶՈՒՑԱՆԵԼ . ԱՐԿԱՆԵԼ . արցունի նագել . \*Ի-  
ջուսցեն աչք ձեր արտասուս : — \*Իջուցէք ընդ աչս ձեր ար-  
տասուս : — \*Զդիւահարն յորժամ տեսանեմք , արտասուս  
արկանեմք :

ԱՐՏԱՔՈՅ ՄՏԱՑ ԼԻՆԵԼ . ինիւրէ դուրս ելլել . իւլլը կորուն-  
ցնել : \*Մարգարէ սուտ արտաքոյ մօտաց իւրոց եղեւ :

ԱՐՏԱՔՈՒՏ ԱՐՏԱՔՍ . դրէւ է դուրս . շար հետան : \*Առին  
արտաքուստ արտաքս զօրօքն , և տարան սպանին զնոսս :

ԱՐՈՐԱԴԻՐ ԱՌՆԵԼ . հերիւլ (իրու կամ համառավետմբ) . վարել :  
\*Տեսի զայնոսիկ որք զանպատեհսն արօրադիր առնեն :

ԱՐՈՐԱԴԻՐ ԼԻՆԵԼ . հերկուել . հակուել : \*Ոմենայն լեառն  
արօրադիր ակօսաբեկ լիցի . — \*Սիովն իբրեւ զագարակ արօր-  
ադիր լիցի :

ԱՒԱՆԴԵԼ ԶՀՈԳԻ . հոդին առլ : \*Հայր , ի ձեռս քո աւան-  
դեմ զհոգի իմ :

ՅԱԽԱՏ ԳՈՐԾԵԼ . հաւատարմութեամբ ընել : \*Ոչ առնէին համար արանցն յորոց ձեռս տային զարծաթն . . . զի յաւատ գործէին (արքն) : — \*Ոչ առնէին համար արծաթոյն տուելց նոցա . քանզի յաւատ գործէին :

ԱԽԱՐ ԱԽԵԼ , ԱՌՆՈՒԼ , ՀԱՐԿԱՆԵԼ . { նալիել . առարկ դաշ .  
ՅԱԽԱՐ ԱԽԵԼ . { գետել ժերիել \*Ածին

ՅԱԽԱՐԻ ԱԽԵԼ , ԱՌՆՈՒԼ , ՏԱՆԵԼ . { աւար (զոր ինչ գտին) : — \*Աւար առին զամենայն քաղաքս նոցա : — \*Ո՞վ իցէ որ ոչ հար աւար գլաւպուտ նորա : — \*Զաւար նորա և զանասուն նորա ածցես յաւարի : — Զամենայն ստացուածս նոցա առին յաւարի : — \*Բազում գանձս յաւարի տանէին :

ՅԱԽԱՐ ԵՐԹԱԼ . առար ըլլալ (էբրէ գերէ) : \*Բազումք ի նոցանէ յաւար երթեալ էին ի քաղաքս իսոսորայ :

ԱԽԵԼ ԱԽԵԼ . առել : \*Ո՞վ իցէ կին , որոյ իցեն դրամք տասն , և եթէ կորուսանիցէ դրամ մի , ո՞չ ըրւանէ ճրագ և ածիցէ աւել ի տան , և խնդրիցէ սոէպ , մինչև գտանիցէ :

ԱՒԵՏԱՐԱՆԱՇԱՀ ԼԻՆԵԼ . առերարն արուելով էր շահը ի՞ւղ-ալլել : \*Որք ստացուածավաճառք և աւետարանաշահք լինէին :

ՅԱԽԵՐ ԴԱՐՁՈՒՅԱՆԵԼ . առել . առել . առերակ ընել : \*Զքաղաքս քո յաւեր դարձուցից , և եղիցիս յաւերակ :

ՅԱԽԵՐ ԴԱՌՆԱԼ , ԼԻՆԵԼ . առերակ ըլլալ . առերակիլ : \*Եթէ եղիցին տունք բազումք , սակայն յաւեր դարձցին : — \*Զի՞-արդ եղեն յաւեր յանկարծակի : — \*Եղեն յաւեր և յանապատ որպէս և այսօր :

Ա.Փ ՅԱՓՈՅ . հարթաւանցի . առանց պարտապութեան . համառօք : \*Ա.փ յափոյ վազվազակի սուանց խորհրդոյ ստացեալ :

ԱՓԻԲԵՐՍԱՆ ԱՌՆԵԼ . բերանը ժողով . պաղանձեցնել : \*Ա.փիբե-րան առնէր զնոսա գործոցն ձմբարտութիւն : — \*Ա.փիբերան արա զնոսա հրամանօքն Քրիստոսի :

ԱՓԻԲԵՐԱՆ ԼԻՆԵԼ . բերանը ժողով . պաղանձիլ : \*Զի՞նչ տաց առ այդ պատասխանի , բայց եթէ ափիբերան լինիցի : — ի խօսել իմում՝ առաւել ափիբերան լինիցին :

Յ. Գ.

(ԿՈՍԱՐԱԾ «Ա» ՆՇԱՅԲՐԻ)

ԽՆԱՄԱԿԱԼՔ ՀԱՆԴԻՍԻՍ  
Յ. ԳՈՒՐԳԵՆ Ա. Մ. ԳՈՐԾԱՑԵԱՆ

